

Ի բանիցս յայսցանել երկուցեալ Արքայ
և նախարարքն՝ իրեւ Պետրոս Հայրապետ
ու յանձն էառ վերսամին զԵթոռն ըստ
թախանձանաց նոցա, (1036թ.) հրաւի-
րեցին զՅովսէփ Կաթողիկոս Ազուանից
հանգերձ Խպիսկոպոսօք իւրովք և ար-
քայն Ճողով արարեալ Խպիսկոպոսաց,
Վարդապետաց և կրօնաւորաց Խնիքա-
զաքի, որպէս ասացեալ է մեր ի պատմաւ-
թիւն Ճողովցն ի հատորն 5, անոյ պար-
տաւոր դատեն զՎեռուիրոս, և ընկեցեալ
ՃԵթոռոյ իշխանութեան՝ պատառեն ըզ-
Քաջն զոր ընդ զիսով կրէր ըստ սովորու-
թեան ժամանակին, զոր և յաքորս առա-
քեցին ի վանս իւր ի Անհաջին, և ածեալ
վերսամին զՊետրոս յաթոռն՝ եղին ի վե-
րայ ամենայն ձեռնազրելոցն առ ի Գե-
սակորոսէ զապաշխարութիւն՝ ընդ բանիւ
առնելով զնոսատ:

(Ա. ՀԵՐԵՎԱՆԻ)

ԱՐԵԼ ԱՐԵՎԵՊԻՄՈՒԹՈՒՄ.

ՊԱՏՄԱԿԱՆ

Ս. ՀԹԻՓԱՄԱՐԵԼ

(ԱՆԴՐԱՆ ՌԱԶԵՆ ԱՆԴՐԻԴ)

Գիշերուան երրորդ ժամն էր, ըստ ար-
քունի վայելութեան, ժողովուրդը հար-
սանեաց հանդէսը կկատարէր: Կոյն զի-
շերը Վահագնի մեհենին մէջ նորա-
բացնին առջեւ Հայոց թագուհին պիտի
ներկայանար, ուր թագաւորին և ազգին
հաւատաբնութեան երդումը առլով պի-
տի պսակուէր. ուստի բոլոր մեհեաննե-

րը զարդարուած էին ոսկեռով, արծա-
թով և ոսկեհուռն զիսպակներով, որոնք
այն օրը թագաւորը կընծայէր ի պատիւ-
ե ի շնորհակալութիւն դից, մանաւանդ
Վահագնի բագինը քան զամենը շքեղ
էր: Խնքը Վահեվահեան Վահագն տա-
ճարին ներքին սրահին մէջ բարձրահա-
սակ և վեթխարի ձուլածոյ ոսկի անդրի
կանգնած էր արծաթի պատուանդանի
վերոյ ճակատը թեատարած արծիւ մը
կսաւառնէր: Ճեռքերէն սրածայր կայ-
ծուկներ կտեղար, և պատուանդանին
տակը վիշապներ ոանձուած էին, որոց
վերայ ահարկու աչքով կնայէր: Խսկ
քրմապետը անդադար բազինը բորբոքե-
լով սպիտակ ցլոյ մը եղծիւ ըներէն բը-
նած թագաւորին և թագուհոյն գալս-
տեան կսպասէր:

Բայց թագուհոյն առագաստէն ոչ
ոք լուր չունէր: և մինչդեռ ամբոխը զի-
զուած մեհենին դուռը կապասէր, թա-
գաւորական ապարանից դաները ճանչե-
լով ետեկ ետեւ բացուեցան, արքունի
տիգաւոր պահապանք զարհուրած ճա-
նապարհ կրանան, և մէկ աղջիկ մը վա-
զեց դուրս ելաւ: Աընթանայ քաղաքին
մէջ, զլուխը բաց, սեագոյն մազերը խառն
ի խուռն ուսերէն կախուած կծփան, ըզ-
գեստը պատուած, երկու ձեռօքը ամ-
փոփած մերկութիւնը կծածկէ: Ճանա-
պարհին ոչ մէկ տեղ կանգ չառաւ, ոչ
մէկու մը հետ խօսեցաւ, վազելով կեր-
թայ:

Ճանինք ետեէն: Վաղաքին ծայրը
հնձանքին մօտիկ ստուեր կերեի. կենանք
զիտենք, և աեսնենք թէ ո՞ է. ինչու
տարաժամ հոս կպալաի: Վհա ձայն

լսուեցաւ, ծանօթ է մեզ, և սյոց թաշքուհին է՝ առադաստեն փախստական։ Այն ձայնը կրկին լսուեցաւ աւելի աղադու։ «Ելէք, կդոչէ, ելէք, սիրելի ընկերակիցք, յաղթեցի բռնաւորին, և աղասեցի զիս նորա պիղծ ձեռքերէն», և կրկին վազելով կընթանայ, կհասնի մինւ Արտաշատի քաղաքին ճանապարհին գլուխը, և հոն ծունը կդնէ։

Ելան իսկոյն ընկերակիցք, և զինքը փնտուելով գէսի Արտաշատու ճանապարհը սկսան երթալ. քիչ մի հեռուէն սրտառուշ ձայն մի լսեցին, որ լալազին կազօթէր Աստուծոյ. Առիփսիմէն էր այն, որ ցանկութեամբ մոլեալ թագաւորին յաղթելով և քաղաքին փողոցներէն ընթանալով հոն կհասնէր. խնդութեամբ սպատեցին և փարեցան իրեն։ Իսկ Առիփսիմէն սկսաւ պատմել նոցա վայրենամիա թագաւորին հետ կռուածը, և թէ ի՞նչ պէս զինքը բռնութեամբ ապարանք տանելով առադաստին մէջ արդելեցին. կը նկարագրէր հարսանեաց հանդէսը, և թագաւորին անօրէն չար կամոցը հաշկառակելով հետը ոգորած յաղթածը՝ իւր սրբութիւնը անարատ պահելով, կներկայացնէր վեթխարի հսկայ թագաւորին պարտութիւնը, և թէ ինքը ի՞նչ պէս տիգաւոր պահապան զօրաց մէջէն՝ ոչ իրեն ընդդիմանալ չկարենալով՝ առադաստին կփախէր։ Ասոնք պատմելով նոցա կցուցանէր զգեստը՝ որ բռնաւորը պատառ պատառ արած էր։

Իսկ թագաւորը ի՞նչ կրնէ, առադաստը թափուր, թագուհին չկայ, ցանկութիւն, կատաղութիւն և ամօթ զինքը կատանապէն. կատղած կը մունչէ ապարանքը

թնգացնելով. այն հրաշագեղ օրիորդին յիշատակը մոռնալ չկրնար. հնարք կը մտածէ, պարզե, իշխանութիւն կխոսամնայ ո'վ որ այն աղջիկը համոզէ և իւրեն բերէ. բայց ոչ ոք թագաւորին կը նայ այդ բանը խստանալ։

Աէս զիշեր էր, գունդ մի զօրք առջևներէն բազմաթիւ ջահեր և կանթեղներ արքունի պողոսայէն ձեպով կանցնէր, պահապան գունդը քաղաքին մէջ քալելով կհսկէր, նուագարանաց ձայնը լուեցնել տալով ամբոխը կցըուէր, պատուիրելով որ հարսանեաց հանդէսը գաղրեցնեն։ Բայց խումբ խումբ կվազէր կերթար ժողովուրդը հետաքըբը ութեամբ զօրքին ետև էն. հնձանքին քով զօրքը կեցաւ, հազիւ գիշեր ժամանակ ջահերուսով կարելի է զիրենք ճանչնալ. թագաւորին իշխաններն էին զօրօք, և դահճապեալ դահճներով։

Հնձանքին քովիրը խումբ մը կերեի՝ որք շփոթած կուլան։ Վոաջ անցաւ մէկը զօրքը ձեղքելով, դահճապեան էր այն, որ սուրը պատենէն հանելով սկսաւ առաջ երթալ դէսի երկցած խումբն. վրան նայողը կսարսափի. ձեռաց երկսայրի դաշոյնը արեան կաթիլներէն ժանդուած էր. թագաւորը ընարած էր զինքը երեւ քաջ և հաւատարիմ՝ դահճաց մէջէն քան զամենը անգութը, և պատվիրած էր սաստիւ անթերի հրամանը կաարել. թիկունքը և լանջը նոյնպէս և թեերը երկաթապատ մինչեւ արմուկը կը հասնէր. իսկ ծղիքը և սրունքը մերկ էին. բարձրահասակ և ուժեղ կերեէր ամեն դահճներէն։ Ահաւոր լուութիւն տիրած ամբոխին վիրայ, սրտերն դողալով՝ աշ-

քերն անկած դահճապետին վերայ կըսաւ
պասէին թէ ի՞նչ հրաման պիտի լսեն և
կամ ի՞նչ զմբակ հանդէս պիտի աեսնեն:
Դահճապետը մէջմը ըսրս բոլորը նայեա-
լով սուրը ծօծեց, և մէկէն երկու կարգ
դահճաց եկան երկու կողմը կանգնեցան.
իսկ ի՞նքը երեք քայլ յառաջ երթարով
ահաւոր ձայնիւ մահապարտը կանչեց.
այն խումբին մէջ շփոթութիւնը և աղ-
մուկը աւելցաւ: Տեսնենք ջահերուն լու-
սով թէ ի՞նչ կանեն ու կույան սրտա-
շարժ և կծէն, և մէկու մը հետ զիրկընդ-
խառն վերջին ողջոյն կուտան սիրոյ, և
չեն թողուր զինքը որ երթայ: Իսայց
դահճապետը կատղեցաւ, դաղանի պէս
մանչելով հրամանը կրկնեց և մահա-
պարտը կանչեց այնպիսի ձայնիւ՝ որ քո-
վը կանգնող դահիճք անդամ աեղերէն
ցնցուեցան. և ահա մէկը հազիւ ի՞նքը
զինքը ընկերակցաց ձեռքէն ձողոպերով
փաղեց, եկաւ դահճապետին լնդ առաջ:
Քան զբահիճը բարձրահասակ, սեագոյն
մազերով դեռահաս չքնաղ օրիորդ մը
էր. իսկ ամբոխը ազմկեցաւ մահապարտը
աեսածին պէս, Հայոց թագուհին է գո-
չեց:

Տեսէք Հայոց զիւցազնացեալ հրա-
շալի թագուհին դահճաց մէջ անխոսով
և աներկիւղ կանգնած, և որ արքայա-
կան առագաստին արժանի համարուած
էր՝ արդ մահապարտի պէս անարգու-
թեամբ կմեռնի: Հայաստանի փրկութեան
ժամը հասած, Կարիգորի տասն և չորս տա-
րուան աղաշանքը լսած: Աստուած՝ զը-
թութեան և ողորմութեան վճիռը կըն-
քելու կուսական անրիծ կաթիւ մը կաս-
հանցէր: Կառչեցէք, սպասնացէք, թող-

իջնայ Ենահիտ պիղծ բազմուէն, թող
փախչի Վահեվահեան Վահագն Տօրո-
սի լիւնները, սրբեցէք նոյցա պիղծ տա-
ճարմերը, և Հակիմիմէի պաշտած Աս-
տուծոյն երկրպագելի սուրբ անունը իւր
արեամբը բագնաց վերայ զրեցէք. զնա-
ցէք Արտաշատ, աւետիս տուէք Հայոց
Խոստավանող սուրբ Հոգը, և Շաւար-
շանէ Պանդուսահի կուսական մաքուր ա-
րիւնէն բողբոջած շուշանները քաղելով
բերեք Հայոց հրաշագեղ թագուհոյն
ողջախոհակատը պսակեցէք: — Իսայց ովլ
է այն դահիճը, որ սուրբ սիրար պիտի
մխէ. կոտրեցէք այն երկաթը, կտրեցէք
անզգամին ձեռքը: — Դահիճք իրարուե-
րես կնային, դահճապետը մոլորած եր-
կայն ատեն հրաման անել չիրնար:

Իսկ Հակիմիմէ դեռ դահճաց մէջ
կանգնած՝ բոցավառ աշքերով երկինք կը
նայի. ուր կմնար Ենահիտ, և ուր Աստ-
ղեկ. դեռ հեթանոսք ոչ այնպիսի դիւ-
ցազն և ոչ զեղեցկութիւն աեսած էին:
Իսայց թագաւորին սուրհանդակները ե-
անեէ ետև կհասնին. ուստի դահճապետը
կտագնապին, և հրաման կամէ նախ մա-
հապարտին լեզուն կարել որով թա-
գաւորը կնախտակը, և չէր հաւանէր ա-
նօրէն կամացը: — Տեսէք անարդ երկաթը
դահճաց ձեռքը կշողայ, և բարձրացիր է
մինչեւ Հակիմիմէի կուսական ձակատը. —
Թողէք, թողէք, նախ ես ողջախոհակատին
հոգւոյս համբոյը նուիրեմ, ապա
դուք դահիճք ձեր հարուածը. օրիորդք
Հայոց, որ կաիրեք զՀակիմիմէ և նորա
ողջախոհ վարուց հետեւղ էք, գնացէք
յաղթանակը աեսէք:

Յանկարծ հեթանոս ամբոխը դարձուարելով աղաղակեց, դահճաց մշջէն աւելի գթասիրաները սուրերը ձեռքերնէն ձգեցին, դահճապետը երեսը մէկիդի դարձուեց, և օգուն մէջ ջահճերուն և կանթեղներուն լուսով արիւնաներկ սուր մը կփայլէր, որ ըստ դահճապետին հրամանին հարուածը տալով գետնատարած տապալեց. կիսափակ աչքով կհեծեծէ, յորդահոս արիւնը զգաստ բերանէն վազելով զինքը կներկէ. թող դայ թագաւորը այս փառքին ականատես լինի: Իսայց դահճապետը այս ատեն դահճաց նայեցաւ և ուրիշ հրաման մի տուաւ, որք գիշատիչ դազանաց նման յարձակեցան ամենքը մէկ Հռիփսիմէի վերայ, և ըզ գետները պատըռատելով մերկացուցին զինքը, տանջանարանը կազմուած չորս ցից գետինը դամուած էր, որոց երկուքին ձեռքերը կապելով և երկուքին ոտքերը, բորբոքեցին ջահճը և կանթեղները, և սկսան պարկեշտատուն մարմնը այրել:

Փութա Գայիհանէ, գնա հաւատարիմ սանդ տես, ինչպէս թագաւորաց փառքերէն չխարուեցաւ, նոյնպէս մահուան չարջորանքներէն աներկիւդ և անսասան՝ կանթեղներուն բոցերուն մէջ ձենձերելով կասորին զգուէ սուրբ մարմինը՝ զոր արժանի չեղան թագաւորք գդրուիլ, որ տակց արքայական առագաստը, չընդունեց երկրաւոր մէծութիւնքը. և ինչպէս հոգւով նուիրեալ էր՝ արդ կեանքը ևս Վատուծոյ կընծայէ. համբուրէ սրբափայլ մարմրած աչքերը՝ զոր դու Վատուածային շնորհաց լուսով արձարձած՝ բազկացդ վերայ զինքը սկսու-

ցիր: — Խոկ զուք դահճիք, դթացէք, թաւզէք որ չարչարանաց ցաւերը անկորութեամբ քաշէ:

Իսայց անողորմ են, նորանոր ամանջանքներ կպարասասեն: — Գաղչեց դահճապետը կրկին, դահճիք սարսափած երեսը նայեցան. և վերջին հրամանը արւածին պէս՝ ոմանք սրերով աչքը կփռըն, ոմանք զողը քարեր կթափեն, և ոմանք ալ գեռ զինքը կենդանի տեսներով՝ կտոր կտոր կյօշօտեն:

Վհեւաւ գոչեց դահճներէն մէկը, դահճապետը դարձաւ ամբոխին և ասաց. «որ ոք թագաւորին հրամանը կանարգէ՝ այսպէս կկորսուի . . . և ձեռքի դաշյնը պատեանը գնելով՝ նոյն հրամանը դահճաց ևս տուաւ: Խշխանները կփութաներթալ թագաւորին իմացնել, և ամբոխը սարսափած ի Ա աղարշապատ կդառնայ: Խոկ մեք երթանք սրբոյն Հռիփսիմէի Ռատուծոյ սիրելի Ա կային ոսկեբքը համբուրելով՝ Հայաստանի փրկութեան համար աղօթենք:

Մ. ՊԱԼԵԱՆ.

ԲԱՆԱՏՈՒԹՅԱՆ

ԺԱՌԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

(ԱՆԴԵՎՈՒ ՇԱՀ-ՀԱՆ ՀԱՆՉԵԱՆ)

Խնչու աւրեմն չենք կարող եզրակացնել, որ մի որոշեալ անդի վայրենի կենդանիների մի քանիսի մէջ էլ կարող է երեկ որեկիցէ առանձնական յատկութիւն կազմակերպութեան մէջ. զոր օրի-